մանակ, երբ իւրաքանչիւր ֆրանսիացի քաղաքացի իրաւունք ունի ստիպելու, որ լսեն իր խօսքերը, եպիսկոպոսների յայտարարած ճշմարտութիւնը ատելութեան առարկայ դարձաւ իշխող անձերի համար, և ահա այժմ նրանք կամենում են խլել այդ եպիսկոպոսներից նրանց իրաւունքը՝ ուսուցանել իրանց հօտին»։ Պիոս X-ը հրաւիրում է կաթոլիկներին սերտ կերպով միանալ իրանց հոգևոր առաջնորդ եպիսկոպոսների շուրջը, յորդորելով կռիւ մղել եկեղեցու ազատութեան համար, և յոյս է յայտնում, որ «կը գայ մի օր, որ կը տայ նրանց յաղթութիւն թշնամիների վրայ և կը վարձատրէ այժմ թափուող արցունքները»։

Պապի ճառին Ֆրանսիայում բնականաբար խիստ պատասխաններ տուին։ Զգոյշ և չափաւոր «Temps» լրագիրը գրում է, որ «այդպիսի ճառերը միայն այն կարծիքն են հաստատում, թէ Հռոմը չէ ցանկանում հանգիստ թողնել Ֆրանսիային, մինչև որ կառավարութիւնը հանդիսաւոր մեղայական չը բերի նրան։ Աւելորդ անգամ ստիպուած ենք մատնացոյց անել այն կոպտաբերբ աղդեցութիւնների վրայ, որոնք Պիոս X-ի քահանայապետութեան օրից մղում են Հռոմը դէպի ծայրայեղ քայլերը այն երևակայական յուսով, որ եկեղեցին վերջ ի վերջոյ օգուտ կունենայ մի այդպիսի գործելակերպից»։

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բերլինում այժմ տեղի են ունենում Պրուսիայի ինն հին նահանգների աւետարանական եկեղեցու գլխաւոր (հերթական 6-րդ) Սինոդի նիստերը, որի քննութեանը պրուսական բարձր խորհրդից առաջարկուած է օրինագիծ պաստօրների անուղիղ վարդապետութեան մէջ մեղադրութեան մասին, որը Սինոդի զբաղմունքների մէջ ամենակարևոր կէտն է լինելու։ Ազատամիտ պաստօրների մասին «գործերը» որ վերջին տարիներս այնքան յաճախ ծագում են կոնսիստորիաներում և եկեղեցական բարձր

խորհրդում, սահմանեցին կառավարութեանը հոգալ, աւելի յարմար միջոց գտնել վճռելու ընդհարումները նոր աստուածաբանութեան հետևող պաստորների և ուղղափառ (աւանդապահ) ծխականների մէջ։ Նման գործերի քննութիւնը պետական եկեղեցական հաստատութիւնների մէջ յարուցել է և յարուցանում է լուրջ առարկութիւններ։

Ոչ միայն ազատամիտների այլ և չափաւորականների կողմից յամառութեամբ պնդում են, որ աւետարանական եկեղեցում չի կարելի վարդապետութիւնը կարգաւորել իրաւաբանական չափով և հանդանակից շեղումն չը պէտք է նկատել որպէս յանցանք՝ ենթակայ վարչական հետամտութեան, ինչպէս է պաշտօնական պարտաւորութիւնների զանցառութիւնը, այլ եկեղեցու վարդապետութեանը հաւատարիմ հաւատացեալների շահը պէտք է այնպէս պաշտպանել, որ պաստորների ազատութիւն էլ շատ սեղմուած չը լինի։

Այս խնդիրը քննուեց անցեալ տարի գերմանական աւետարանական եկեղեցական կոնֆերենցիայում (գերմանական կայսերութեան պետութիւնների եկեղեցական պետական ներկայացուցիչների ժողով) Էյզենախում. ուր ձևակերպուեցին այս բարեփոխութեան համար ցանկալի կէտերը, որոնք և բարձր եկեղեցական խորհրդից ընդունուեցին որպէս հիմք օրինագծի։ Խորհուրդը համարում է որ յայտնի դէպքում, որքան էլ բողոքականութիւնը ազատ լինէր սահմանափակութիւններից, պաստորների շեղումը դաւանութիւնից անհամապատասխան է նրանց եկեղեցական պաշտօնէութեանը. բայց խորհուրդը անյարմար է գտնում իրաւական, զուտ մեքենական քննադատութիւնը։ «Դաւանութիւնը, ասում է նա, օրէնք չէ», այլ պահանջ որ պաստորը քարոզի Սր. Գրքի բովանդակութիւնը և դաւանութեամբ վաւերացած հաւատի ճշմարտութիւնը, համայնքի հաւատը», իւր քարոզութեամբ համայնքի կրօնական շինութեանը ծառայի։ Բողոքական եկեղեցում նման օրինակ մի այլ պահանջ է, որ այս քարոզը լինի պաստորի անձնապէս իւրացրած ճշմարտու-

թեան կենդանի վկան, նրա քրիստոնէական գիտութեան փորձառութեան հետևանքը»։ Որից հետևում է, որ պաստորի համար ազատութիւնը նրա պաշտօնի անհրաժեշտ պահանջից այն կողմը պէտք է չանցնի։

Այդ երկու պահանջները իրար հետ հաշտեցնելու համար Բարձր—եկեղեցական խորհուրդը ծրագրում է. որև է պաստորի ոչ-ուղիղ վարդապետութեան մէջ մեղադրելիս, թէ «պաստորի շեղումն դաւանութիւնից տեղին էր թէ անտեղի» (և հարցը այսպէս պէտք է տրուի և ոչ թէ պաստորի վարդապետութիւնը ճշմարիտ է թէ սուտ) պետական եկեղեցական վարչութիւններին յանձնելու տեղ պէտք է յանձնել նոր, յատկապէս կազմած ատեանի, որ ազատ համոզմամբ պէտք է վճիռ դնի։ Որպէս զի այս նոր կազմած ատեանը կարողանայ ճշտութեամբ արտայայտել պրուսական աւետարանական եկեղեցու խոստովանութիւնը, նրա կազմի մէջ, բացի եկեղեցական կառավարութիւնից, աստուածաբանական գիտութեան և եկեղեցական հասարակութեան ներկայացուցիչներ էլ պէտք է լինին։ Ատեանը, ծրագրի համեմատ պէտք է կազմուի 13 անդամից. նախագահից, որ ժողովի ատենապետն է լինելու, նրա հոգևորական և աշխարհական օգնականներից, և բարձր եկեղեցական խորհրդի աւագագոյն անդամից, հին նահանգների գերմանական համալսարանների աւետարանական աստուածաբանութեան երկու իսկական պրոֆեսորներից, որոնք խորհրդի առաջարկութեամբ պէտք է նշանակուած լինեն թագաւորից, գլխաւոր սինոդի ընտրած երեք անդամներից, և գեներալ սուպերինդենդից այն նահանգի, որտեղացի որ է մեղադրեալը և գաւառական սինոդի ընտրած երեք անդամից։ Այս ատեանի առաջ քննուում է պաստորների ոչ ուղիղ վարդապետութեան գործը, բերանացի վկաների ցուցմունքներով, ի ներկայութեան մեղադրեալի և նրա պաշտպանի։ Ներկայ եղող անդամների $^2/_3$ բազմութեամբ դրած վճռի մէջ որոշւում է. հաստատւում է թէ չի հաստատւում, ամբաստանեալ պաստորի շեղուած լինելը. ապա վճռւում է թէ նրա գոր-

ծունէութիւնը անհամապատասխան է այն կոչմանը, որ նա ունի դաւանութեան վերաբերութեամբ։ Վճիռը համարում է անդառնալի։

Երբ վճռում է, թէ պաստօրի վարդապետութիւնը ուղիղ չէ, դուրս է արւում նա պաշտօնից և զրկւում հոգևոր կոչման բոլոր իրաւունքներից և տիտղոսից, կորցնում է իրաւունքը պետութիւնից թոշակ ստանալու, և իւր մահից յետոյ կինն ու զաւակները նոյնպէս զրկւում են պետական նպաստից

Սակայն նոր օրէնքը նրան բոլորովին էլ չի կամենում թողնել զուրկ միջոցներից. և թողնում է բարձր եկեղեցական խորհրդին նրան թոշակ տալ եկեղեցական թոշակների գումարից այն չափով և այնքան ժամանակ, որքան որ բարեաք է գտնում։

Վերջ ի վերջոյ նոր դատարանը եկեղեցու դաւանութիւնից շեղող պաստօրին աւելի խիստ է դատում քան առաջին վարչական դատարանը։

Թէև ձևական կողմից՝ դատավարութիւնը կրում է աւելի ուսման վարդապետութեան մասնագիտական քննութեան կերպարանք քան յանցանքը պատժելու միջոց։

Թէև օրինագիծը հրատարակուած է Սինոդի բացումից ոչ շուտ, բայց մամուլը արդէն յայտնել է իւր կարծիքը, ըստ էութեան։ Պաշտօնական պարտաւորութեամբ ազատամիտ մամուլը ինչպէս պէտք էր ենթադրել, խիստ վերաբերուեց դէպի օրինագիծը, համարելով այն բռնութիւն գիտութեան վերայ. պահպանողականները օրինագիծը համարում են անբաւարար, ասելով, որ պաստօրի ոչ ուղիղ վարդապետութիւնը պէտք է դադարուի եկեղեցու դաւանութիւնը կանոն ընդունելով։ Նրանք կարծում են, «որ դատարանը աւելի բարձր է դասուած քան դաւանութիւնը, և ստանում է իշխանութիւն որ չունեն ոչ կարդինալները և ոչ պապը»։ Կաթոլիկական լրագրները չարախնդութեամբ հեգնում են, «պրոտեստանդութեան անսխալական վարդապետութեան» հաստատութիւնը։

—Նիմում, որ հարաւային Ֆրանսիայի բողոքականների կենտրոնն է, հոկտեմ. 26—28 (ն. տ.) տեղի ունե-

ցաւ ֆրանսական բողոքականների առաջին գլխաւոր ժողովը։

Բողոքականութիւնը Ֆրանսիայում հետևեալ եկեղեցական համախմբումներն ունի. 1—3 բեֆորմատեան եկեղեցիներ, որի մէջ մտնում են բողոքականների մեծագոյն մասը. նրանք երեք խմբի են բաժանում — օրթոդոքս կամ աջակողմեան (églises réformées evangeliques) ազատամիտ կամ ձախակողմեան (églises réformées unies) և միջին (égleses réformées) կամ ժարնակեան միութիւն. 4. ազատ (բեֆորմատեան) եկեղեցիներ. 5. Լուտերական կամ Աւգսբուրգեան դաւանութեան եկեղեցիներ. 6, Մեթոդիստների եկեղեցի. 7. Բապտիստների եկեղեցի։ Այս եօթն եկեղեցիները չունէին մի ընդհանուր կենդրոն, հաղորդակցութիւն պահում էին իրար հետ միայն երեք յանձնաժողովների միջոցով։

Ժողովի նպատակն է բողոքական եկեղեցիների միութիւն կազմել։ Նիմ հաւաքուել էին 88 ներկայացուցիչներ։ Աշխատութեան համար չորս յանձնաժողով կազմուեցին իւրաքանչիւրը 15 մարդուց. ա. ժողովի ցանկութիւնները քննելու. բ. ապագայում գլխաւոր ժողովը կազմակերպելու հարցի համար. գ. յանձնաժողովի գործողութեան առաջարկները նայելու համար, դ. ֆրանսական բողոքականներին դիմելու ծրագիրը կազմելու համար։ Որոշուեց գլխաւոր ժողով կազմել հինգ տարին միանգամ,... մաքառելու արբեցութեան դէմ, Ս. Գրքի երկու ընկերութիւնները միացնել և Մադասգասկարում պահպանել խղճի ազատութիւն, ընկերական դատարան հիմնել, Կալվինի արձանի համար հանգանակութիւն բանալ։ Ժողովը որոշեց դիմել ֆրանսական բողոքականներին, հաւատարիմ մնալ այն հաւատին, որի համար իրանց նախնիքը նահատակուել, արիւն են թափել։ Բողոքական քրիստոնեաների շրջաբերականը յորդորում է, որ աւելի և աւելի անձնուէր և հաւատարիմ անդամ լինեն իրանց եկեղեցուն, որով եկեղեցիները առաւել ևս կարող են մերձենալ իրար։ —Կրօնի դասաւանդութիւնը.—Բողոքականները մեծապէս զբաղուած են ժողովրդական դպրոցների կրօնի դասա-

սաւանդութեամբ։ Սաքսոնիայի ուսուցչական միութիւնը որի մէջ հաշուում են 4000 հոգի, Ցվիկաու-ի մէջ ժողով է կազմել և որոշել է բարեփոխել կրօնի դասաւանդութիւնը։ Դնում ենք այստեղ որոշման կարևոր կէտերը։

1, Կրօնը—ուսանելի առարկայ է, որ ունի էական նշանակութիւն, և կրօնի դասաւանդմանը դպրոցում պէտք է տալ յատուկ տեղ։

2. Նրա նպատակն է մանկան հոգու մէջ արմատացնել Քրիստոսի բարոյական ուսումն։

3, Կրօնի ծրագիրն ու միջոցները պէտք է համապատասխանեն մանկական հոգու պահանջներին, որ պէտք է մշակէ ինքն դպրոցը։ Տարրական դպրոցում կրօնի դասերին պէտք է խուսափել դաւաբանական տեսութիւններից։

4, Դասաւանդելու համար այնպիսի նիւթ պէտք է ընտրուի, որ կարողանայ պայծառ կերպով ներգործել մանկան կրօնական և բարոյական զգացմունքի վերայ։ Դասաւանդութիւնը պատմական յատկութիւն պէտք է ունենայ. նրա հիմնական կէտը պէտք է լինի Քրիստոսի անձնաւորութիւնը։ Բաց ի Սուրբ Գրքի նիւթից պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել կրօնական բարոյական ասպարիզում գործողների վարքի և կենսագրութեան վերայ։

5. Ծխական դպրոցները պէտք է զերծ լինեն դաւաբանական կրօնի դասաւանդութիւնից, դպրոցի բարձր դասարանում պէտք է բացատրուի հաւատապատումի բովանդակութիւնը, այսինքն 10 պատուիրանները, լեռան քարոզը. Հայր մերը. որպէս քրիստոնէական բարոյականի էական հիմունքներ։...

Բայց Սաքսոնիայի դպրոցների տեսուչների ժողովը բոլորովին ուրիշ հայեացք ունի։ Ժողովը անհրաժեշտ է գտնում եկեղեցու դաւանութեան դասաւանդութիւնը ըստ Լուտերի հաւատապատումի, դպրոցում սկսել հենց առաջին տարուանից, առաջին և երկրորդ տարին՝ շաբաթը երեքական կէս ժամ, դաս, 3 և 4 տարին 2 ական, 5–6 տարին երեքական 7 և 8 տարին չորսական ամբողջ ժամերով դասեր։

Սեմինարիաների ուսուցիչները ժողովրդական դպրոցների ուսուցիչների և տեսուչների միջև միջին ճանապարհն են ընտրել, և որոշել են՝

1, Դպրոցն ու եկեղեցին միասին պէտք է կազմեն դպրոցի կրօնի դասաւանդութեան ծրագիրը։

2, Բացի քրիստոնէական կրօնի պատմական զարգացման մասին տեղեկութիւնից, անհրաժեշտ է քրիստոնէութեան կրօնական—բարոյական հայեացքի մասին ընդհանուր տեղեկութիւններ տալ մանուկներին առաւելապէս օգտուելով Լիւտերի հաւատապատումից։

3, Անհրաժեշտ է պակասացնել ուսման ծրագիրը, բայց պահել թուանշաններն ու հարցաքննութիւնները։